

**V. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ,  
ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀՀ ԱՎԾ-ն շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ, նրանցից ստացել՝ տեխնիկական, ֆինանսական, խորհրդատվական և աշխատանքային օգնություն:

2014թ.-ին ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվել են աշխատանքներ հետևյալ նախագծերի շրջանակներում.

1. Եվրոպական բնապահպանական գործակալության օժանդակությամբ.

- ԵՀԶ-ԲՏՄՀ (Բնապահպանական տեղեկատվական միասնական համակարգ) նախագիծ:

2. ԵՄ օժանդակությամբ.

- ԻՆՈԳԵՅԹ (INOGATE) միջազգային համագործակցության նախագիծ էներգետիկայի ոլորտում:

3. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ.

- Բարձրացնել գործընկեր պետական մարմինների կարողություններն ազգային և մարզային մակարդակով «ԱրմենիաԻնֆո»-ի մեկնարկային գործարկման հարցում՝ Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) և Կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ) գծով արձանագրած առաջընթացը մշտադիտարկելու և լուսաբանելու նպատակով:

4. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ.

- 2014 թ. «ՏՐԱՆՍՄՈՆԵԵ» ծրագիր:

5. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ.

- Մանկական աղքատություն:

6. ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության օժանդակությամբ և Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսավորմամբ.

- Աջակցություն գյուղատնտեսական համատարած հաշվառմանը:

7. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) օժանդակությամբ.

- ՄԱԿ-ի զարգացման հաշվի (UNDA) 9-րդ տրանշի նախագիծ «Ազգային կարողությունների հզորացում UNECE-ի առավել խոցելի երկրներում վիճակագրության կայուն զարգացման համար»:

8. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության/ԱՄՆ-ի Հաշվառումների Բյուրոյի օժանդակությամբ.

- ՀՀ 2011 թ. մարդահամար:

9. Համաշխարհային բանկի օժանդակությամբ.

- Վիճակագրական հզորությունների կառուցում և աջակցություն Հայաստանի փորձնական Գյուղատնտեսական համատարած հաշվառման իրականացմանը:

10. Համաշխարհային բանկի օժանդակությամբ.

- 2014թ. ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագիր ԱՊՀ տարածաշրջանում (համակարգող՝ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե):

11. Համաշխարհային բանկի խորհրդատվական օժանդակությամբ.

- Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն:

12. Համաշխարհային բանկի օժանդակությամբ.

- Աշխատանքի վիճակագրության զարգացում ԱՊՀ տարածաշրջանում (համակարգող՝ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե):

13. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության/ԱՄՆ-ի Գյուղատնտեսության դեպարտամենտի օժանդակությամբ.

- Աջակցություն անցկացնելու առաջիկա գյուղատնտեսական համատարած հաշվառումը:

14. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության/Տետրա Տեք ինկ. Կազմակերպության օժանդակությամբ.

- Հայաստանի ազգային էներգետիկ հաշվեկշռի և ջերմոցային գազերի գույքագրման համակարգերի ստեղծում:

15. ԵՄ օժանդակությամբ.

- Աջակցություն գյուղատնտեսության և գյուղական զարգացմանը - ԳԳԶԵՀԾ (ENPARD) Հայաստան (բյուժետային աջակցություն):

16. Աշխատանքի միջազգային կազմակերպության օժանդակությամբ.

- Դպրոցից դեպի աշխատանք անցումային հետազոտություն երիտասարդ մարդկանց համար Հայաստանում 2014թ.:

ՀՀ ԱՎԾ-ն Եվրոպական հարևանության ծրագրի շրջանակում՝ «ԵՄ ստանդարտներին համապատասխանող վիճակագրական մեթոդների ընդունում և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության արդիականացում» ներքո. հիմնվելով ԵՄ փորձագետների կողմից Հայաստանի վիճակագրական համակարգի ընդհանուր գնահատման վրա, վիճակագրական համապատասխան ոլորտներում Եվրոպական ստանդարտներին համապատասխանելու նպատակով կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարության մշակման և իրականացման, բիզնես-ռեգիստրի որակի և ընդգրկման բարելավման, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցերի համաձայն գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և իրականացման. ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2014-2015թթ. միջոցառումների ներքո՝ «Տնային տնտեսությունների բյուջեի հետազոտություն/եկամուտների և կենսապայմանների վիճակագրություն» ԵՄ երկու կանոնակարգերի ուսումնասիրման, փորձարկման և տեղայնացման ուղղությամբ.

1. Իրականացվել են ԵՄ կանոնակարգերի ուսումնասիրման աշխատանքները, մասնավորապես, ուսումնասիրվել են «Համայնքի եկամուտների և կենսապայմանների վիճակագրության վերաբերյալ 2003թ. հունիսի 16-ի Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1177/2003/EC կանոնակարգը» և «Մահմանումների և արդիականացված սահմանումների հետ կապված Համայնքի եկամուտների և կենսապայմանների վիճակագրության վերաբերյալ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1177/2003 կանոնակարգի իրականացման վերաբերյալ Հանձնաժողովի 2003թ. հոկտեմբերի 21-ի թիվ 1980/2003/EC կանոնակարգը»:

2014թ.-ին շարունակվել է 2011-2013թթ. իրականացված «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎինինգ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎինինգ ծրագրի արդյունքներով մշակված ճանապարհային քարտեզների իրականացումն ըստ ծրագրի բաղադրիչների:

ԵՄ ԹՎԻՆԻՆԳ գործիքի ներքո ներկայացվել և հաստատվել է ՀՀ ԱՎԾ կողմից մշակված «Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության ամրապնդում» խորագրով երկրորդ ԹՎԻՆԻՆԳԻ ծրագրային առաջարկը, որի նպատակն է ամրապնդել ՀՀ ԱՎԾ ներուժը: Ծրագրի առաջարկի «ֆիշը» ներառում է հետևյալ բաղադրիչները. վիճակագրական տեղեկատվության տարածում, ժողովրդագրական վիճակագրություն, աշխատանքի շուկայի վիճակագրություն, աղքատության վիճակագրություն, գիտահետազոտական աշխատանքների վիճակագրություն և շրջակա միջավայրի վիճակագրություն:

ՀՀ ԱՎԾ-ն Նորվեգիայի վիճակագրական ծառայության հետ համատեղ մշակել և ներկայացրել է երկկողմանի համագործակցության ծրագրի առաջարկ՝ Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիային (EFTA) ու ստացել վերջինիս հավանությունը ծրագրի ֆինանսական օժանդակության հետ կապված: Ծրագրի նպատակն է ուսումնասիրել Նորվեգիայի լավագույն փորձը «Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի (GSBPM)» ներդրման ուղղությամբ:

2014թ.ին «ԱրմենիաԻնֆո» ծրագրի շրջանակում ստացած գիտելիքների և հմտությունների ու ձեռքբերված փորձի հիման վրա՝ Ղազախստանի ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ ՀՀ ԱՎԾ կողմից տեղի է ունեցել այցելություն ք. Ուստ-Կամենոգորսկ, որի նպատակն էր՝ ներկայացնել «ԱրմենիաԻնֆո» տեղեկատվական համակարգի ներդրման Հայաստանի փորձը, ցուցաբերել տեխնիկական աջակցություն ԴեվԻնֆո տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման ուղղությամբ Արևելյան Ղազախստանի մարզի համար:

ՀՀ ԱՎԾ կողմից մշակվել է «Ձեռնարկ ԱրմենիաԻնֆո – տվյալների բազա ադմինիստրատորների համար» գրքույկը, որը տեղադրվել է ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում:

2014թ.-ի ընթացքում ընդլայնվել և արդիականացվել են տվյալների բազաները «ԱրմենիաԻնֆո» համակարգի շրջանակում:

«ԱրմենիաԻնֆո» ծրագրի շրջանակում ՀՀ ԱՎԾ-ն օժանդակություն է ցուցաբերել էլեկտրոնային ուսուցման (e-learning) աշխատանքների իրականացմանը, մասնավորապես, Գյումրու «Տեխնոպարկ» ՏՏ-ի ընկերությանը՝ մշակելու «ԴեվԻնֆո 6.0 Մպառող և Տվյալների բազայի ադմինիստրացիա» խորագրով դասընթացը, որը 2014թ. հոկտեմբերի 8-ին ներկայացվել է հանրությանը և տեղադրվել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ու ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջերում:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ 2013թ. հուլիսի 1-ից մինչև 2014թ. հունիսի 30-ն իրականացվել է ՏՏԿԱՀ-ին կից «Երեխաների կարիքները» խորագրով մոդուլային հետազոտությունը, որի արդյունքները զետեղվել են «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014թ.» վիճակագրական ժողովածուի «Մանկական աղքատություն» գլխում:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ 2014թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ՏՏԿԱՀ շրջանակում բոլոր տնային տնտեսություններում իրականացվել են մինչև 5 տարեկան երեխաների կշռի և հասակի չափագրումները, որոնց արդյունքները կհրապարակվեն «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015թ.» վիճակագրական ժողովածուի «Մանկական աղքատություն» գլխում:

2014թ.-ին ՀՀ ԱՎԾ 88 աշխատակից 21 արտասահմանյան երկրներում (Ավստրիա, Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Շվեյցարիա, Բելառուս, Իրանի Իսլամական Հանրապետություն, Վրաստան, Դանիա, Թուրքիա, Ղազախստան, Ֆրանսիա, Իտալիա, Մոնտենեգրո, Ֆինլանդիա, Թայլանդ, Մոլդովա, Մոնղոլիա, Լեհաստան, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Խորվաթիա) վերապատրաստվել և մասնակցել են տարբեր միջոցառումների հետևյալ թեմաներով. վճարային հաշվեկշռի վիճակագրություն, Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային Միությանը և Միասնական տնտեսական տարածքին անդամակցության հարցերով աշխատանքային խմբի երրորդ հանդիպում, մակրոտնտեսական դիագնոստիկա (ախտորոշում), մարդահամարի մեծ միկրոտվյալներ, ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 45-րդ նստաշրջան, գյուղատնտեսական համատարած հաշվառման կազմակերպման և անցկացման ԱՄՆ-ի փորձին ծանոթանալու նպատակով այցելություն, գենդերային վիճակագրություն, վիճակագրության տարածումը սպառողին հարմար ձևով, միջազգային համադրումների աշխատանքների իրականացման սպառողական ապրանք-ծառայություն ներկայացուցիչների քննարկման և համաձայնեցման նպատակով կազմակերպված աշխատանքային սեմինար-խորհրդակցություն, Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնի և ՀՀ ԱՎԾ միջև համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի շրջանակում երկկողմանի կապերի ընդլայնման և վիճակագրական գիտելիքների ու փորձի փոխանակման նպատակով հանդիպում, ազգային հաշիվների փորձագետների խմբի հանդիպում, ազգային հաշիվներ, ՀՀ-ի Մաքսային Միությանը և Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միասնական տնտեսական տարածքին միանալու հարցերով աշխատանքային խմբի 6-րդ նիստ, բնապահպանական ցուցանիշների միասնական նպատակային խմբի 8-րդ նստաշրջան և ջրերի որակի վիճակագրությանը նվիրված սեմինար, արդյունաբերական արտադրության ինդեքսներ, ԵՀԲԲ-ԲՏՏՀ ծրագրի շրջանակում մեթատվյալների և հաշվետվական ցանցի վերաբերյալ 3-րդ սեմինար, ազգային վիճակագրության թղթակիցների համար անտառային արտադրանքի վիճակագրություն, որակը պաշտոնական վիճակագրությունում. գնահատման մշակույթը, պաշտոնական վիճակագրության որակը, պաշտոնական վիճակագրության մոդերնիզացում (արդիականացում), ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 51-րդ նիստ, «Արմենիաինֆո» տեղեկատվական համակարգի ներդրման Հայաստանի փորձը ներկայացնելու և Արևելյան Ղազախստանի մարզի համար Դեվինֆո տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման ուղղությամբ տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով այցելություն, մահացության պատճառական միտումները Կովկասյան երկրներում, անցում դպրոցից դեպի աշխատանք, ՀՆԱ-ի փոփոխությանը հանգեցնող Ազգային հաշիվներ 2008-ի փոփոխությունները, Էներգետիկայի վիճակագրություն և Էներգետիկ հաշվեկշիռ, ռազմավարական կառավարումը որակի շրջանակներում, «Ժամանակի օգտագործում» հետազոտության տվյալների հիման վրա՝ տնային տնտեսության արտադրության ծավալների հաշվարկ, դրամավարկային և ֆինանսների վիճակագրություն, «Ամբողջական վիճակագրական պատկերի ստացում» խորագրով Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրներում քաղաքացիական կացության գրանցումների և բնական շարժի վիճակագրության հարցերով նախարարական համաժողովի տարածաշրջանային նախապատ-

րաստական հանդիպում, մակրոտնտեսական վիճակագրության համար միջազգային ստանդարտների համակարգված ներդրում, միգրացիայի վիճակագրություն, Ասիայի տարածաշրջանի երկրների ՀԶՆ խորհրդատվական հանդիպում, ընտրանքային հետազոտության առաջադեմ մեթոդները, ԵՄ բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ղեկավար կոմիտեի 5-րդ նիստ, որակը վիճակագրությունում. ինչպես կառավարել փոփոխությունները, մարդահամարների և կացարանների համատարած հաշվառման փորձագետների խմբի աշխատանքային հանդիպում, գլոբալ գնահատումներն ազգային վիճակագրական համակարգերի զարգացման համար, բնակչության վիճակագրություն, վարչական ռեգիստրների օգտագործումը վիճակագրական տվյալների ստացման համար, կառուցվածքային բիզնես վիճակագրություն, մարդկային ռեսուրսների կառավարում և վերապատրաստում, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ֆինանսների վիճակագրության ցուցանիշների հավաքագրման, մշակման և տարածման մեթատվյալների համակարգի մշակում, ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի հերթական 13-րդ նիստ, բնապահպանական վիճակագրական տեղեկատվության որակը, վիճակագիրների և բնապահպանների միասնական աշխատանքի նպատակային խմբի 9-րդ նստաշրջան և բնապահպանական մշտադիտարկման և գնահատման աշխատանքային խմբի 15-րդ նստաշրջան, TRANSMONEE ծրագրի շրջանակում անդամ-երկրների համակարգողների հանդիպում, միջազգային համադրումների ծրագրով ներդրումային ապրանք-ներկայացուցիչների տեխնիկական բնութագրերի և դրանց գնային տեղեկատվության ստուգման և համաձայնեցման նպատակով կազմակերպվող աշխատանքային խորհրդակցություն, Վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակումը (SDMX) և մեթատվյալների փոխանակման համար, արդյունաբերության վիճակագրության հարցաթերթերը, աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (GIS), Էռամայակային ազգային հաշիվների ձեռնարկ, Ինդեքս ծրագրի էներգետիկ վիճակագրության ցանց, էներգետիկ վիճակագրության գործողությունների ծրագրի ձեռքբերումները և էներգետիկ վիճակագրության տվյալների որոկի, հաշվեկշիռների և պլանավորման կատարելագործման անհրաժեշտությունը, Արևելյան գործընկերության պլատֆորմ 4՝ 2014թ. Թուրինի տարածաշրջանային գործընթաց, տեղեկատվական տնտեսության վիճակագրություն, ՄԱԿ-ի զարգացման հաշվի 9-րդ տրանշի մեկնարկային հանդիպում, ԱՊՀ տարածաշրջանում աշխատանքի վիճակագրության զարգացումը. տեղեկատվության փոխանակման խնդիրները և հեռանկարները, ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 52-րդ նիստ:

Նշված միջոցառումների համար նախապատրաստվել և ներկայացվել է 18 զեկույց՝ 240 էջ ընդհանուր ծավալով:

2014թ.-ին ՀՀ ԱՎԾ 240 աշխատակից միջազգային համագործակցության շրջանակում մասնակցել է ՀՀ տարածքում (Երևան, Ծաղկաձոր, Դիլիջան, գ. Գեղադիր, գ. Արզական, Աղվերան) կազմակերպված թվով 61 միջոցառումների (աշխատանքային հանդիպումներ, շնորհանդեսներ, քննարկումներ, սեմինարներ, նիստեր, աշխատաժողովներ, ուսուցման դասընթացներ, խորհրդակցություններ, կլոր սեղան-քննարկումներ, կոնֆերանսներ, վիդեոկոնֆերանսներ, համաժողովներ, զագաթաժողովներ, հանդիսավոր ընթրիքներ):

2014թ.-ին ՀՀ ԱՎԾ է այցելել 8 հանձնախումբ, 17 փորձագետ Եվրամիության վիճակագրական ծառայությունից (Եվրոստատ), ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունից (UNIDO), Համաշխարհային բանկից, Դանիայի վիճակագրական ծառայությունից, Եվրասիական տնտեսական հանձնաժողովից, ԱՄՆ-ի Հաշվառումների բյուրոյից, ԱՄՆ-ի Գյուղատնտեսության դեպարտամենտից, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունից, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովից, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնից, Շվեդիայի վիճակագրությունից, Թեթև փորձագիտական գնահատում (Light Peer Review) իրականացնելու, ԱՊՀ երկրների համար Հարմոնիզացված արդյունաբերական վիճակագրության գծով տարածաշրջանային նախագծի շրջանակում տարեկան հետազոտության հարցաթերթի օգտագործման հնարավորությունների շուրջ քննարկումներ իրականացնելու, «Ադքատության բազմաչափ ինդեքսի հաշվարկ՝ 2012թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջական հետազոտության տվյալների հիման վրա» թեմայով ուսումնական դասընթաց անցկացնելու, երկրորդ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում փաստահավաք առաքելություն իրականացնելու, միգրացիայի վիճակագրության հատվածի գնահատում իրականացնելու, Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային Միությանը և Միասնական տնտեսական տարածքին անդամակցության նպատակով վիճակագրության ոլորտում կազմակերպչական և մեթոդաբանական հարցերով հանդիպումներ և խորհրդատվություններ իրականացնելու, «Ծողովրդագրական վերլուծություններ» խորագրով սեմինար անցկացնելու, գյուղատնտեսական համատարած հաշվառման իրականացման օժանդակելու, «Հայաստանում ձեռնարկատիրական վիճակագրության զարգացումն ըստ գենդերի» խորագրով սեմինար անցկացնելու նպատակով:

2014թ.-ին ՀՀ ԱՎԾ-ում կազմակերպվել է 9 սեմինար-շնորհանդես՝ նվիրված վիճակագրության տարբեր բնագավառներին ՀՀ ԱՎԾ այցելած միջազգային փորձագետների մասնակցությամբ, ինչպես նաև արդի վիճակագրական գործիքակազմի կիրառման և ստացված ժամանակակից վիճակագրական գրականության շնորհանդեսներ, որոնց՝ ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցների կողմից այցեմասնակցությունների թիվը կազմել է 249 միավոր:

2014 թ.-ին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի իրականացման թեթև փորձագիտական գնահատումը:

ՀՀ ԱՎԾ թեթև փորձագիտական գնահատումը (ԹՓԳ) նախաձեռնվել է Եվրոստատի կողմից ֆինանսավորվող «Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) երկրների վիճակագրական համակարգերի և ընտրված վիճակագրական բնագավառների գնահատում» ծրագրի շրջանակում:

ԹՓԳ-ները հիմնված են ԵՎՀ (Եվրոպական վիճակագրական համակարգի) փորձագիտական գնահատումների կառուցվածքի և ընթացակարգերի վրա և մշակված են թեկնածու երկրների և զարգացած վիճակագրական համակարգ ունեցող երկրների համար: Այս գնահատումների նպատակներն են, մասնավորապես, գնահատել գնահատվող Ազգային վիճակագրական ինստիտուտի (ԱՎԻ) համապատասխանությունը Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի (ՓՕ) 1-6-րդ և 15-րդ սկզբունքներին, գնահատել ԱՎԻ-ի համակարգման դերը Ազգային վիճակագրական

համակարգի (ԱՎՀ) շրջանակում, կարևորել փոխանցելի փորձերը, որոնք հարմար են խթանելու համապատասխանությունը ՓՕ-ին, և առաջարկել բարելավման գործողություններ ՓՕ-ի բոլոր սկզբունքների համար, որոնք անհրաժեշտ են ՓՕ-ի հետ լիարժեքորեն համապատասխանեցնելու տեսանկյունից:

ՀՀ ԱՎԾ-ն լրացրել է նոր ինքնագնահատման հարցաթերթ Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի իրականացման և հարցաթերթ ԱՎԻ-ների համակարգման դերի վերաբերյալ, որոնք կօգտագործվեն ԵՄ անդամ պետությունների փորձագիտական գնահատումների երկրորդ փուլում:

Գնահատման գործընթացը նախաձեռնվել է Եվրոստատի կողմից՝ ՀՀ ԱՎԾ 2013թ. սեպտեմբերի խնդրանքի հիման վրա: Գնահատումն իրականացվել է 3 փորձագետների կողմից՝ առաջատար փորձագետ Գյունտեր Կոպշ (Գերմանիայի Դաշնային վիճակագրական գրասենյակի նախկին տնօրեն), Կլաուդիա Յունկեր (Եվրոստատ) և Սիվ Իրենե Պեդերսեն (Եվրոստատ):

Գնահատման առաքելությունը տեղում այցելության ձևով տեղի է ունեցել 2014թ. փետրվարի 10-14-ը (հաշվետվությունը տեղադրված է ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում): Գրավոր նյութերը և ՀՀ ԱՎԾ կայքէջում հրապարակված փաստաթղթերի հղումները հասանելի են եղել մինչ այդ և գնահատման առաքելության ընթացքում: Հիմնական փաստաթղթերը ներառել են լրացված ինքնագնահատման հարցաթերթերը (այսինքն՝ համապատասխանությունը ՓՕ-ին և համակարգման դերը), որոնք տրամադրվել են ՀՀ ԱՎԾ կողմից 2014թ. հունվարի կեսերին:

Գնահատման թիմը շատ բարձր է գնահատել լավ նախապատրաստված հանդիպումները և հաղորդակցության թափանցիկությունը, ինչպես ՀՀ ԱՎԾ անձնակազմի, այնպես էլ գործընկեր և շահառու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ու հույս հայտնել, որ գնահատումն օգտակար կլինի ՀՀ ԱՎԾ հետագա զարգացման համար: Հայաստանն առաջին երկիրն է Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում, որն անցել է թեթև փորձագիտական գնահատում:

2014թ. հոկտեմբերի 13-16-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) միգրացիայի հարցերով ավագ փորձագետ՝ Անի Հերմիի և փորձագետ՝ Ապոլոնիա Օբլակ Ֆլանդերիի կողմից իրականացվել է ՀՀ ԱՎԾ միգրացիայի վիճակագրության հատվածի գնահատումը, որի հիմնական նպատակն էր գնահատել Հայաստանում վիճակագրական համակարգի վարչական և տեխնիկական կարողություններն՝ արտադրելու միգրացիայի վիճակագրություն և առաջարկել բարելավման գործողություններ: Գնահատման գործընթացը նախաձեռնվել է Եվրոստատի կողմից՝ ՀՀ ԱՎԾ խնդրանքի հիման վրա: Գնահատումը հիմնված է ՀՀ ԱՎԾ կողմից լրացված ինքնագնահատման հարցաթերթի, որը մշակված է համաձայն 2012թ.-ի Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակի, ՀՀ ԱՎԾ կողմից տրամադրված և կայքէջում հրապարակված փաստաթղթերի վրա, որոնք հասանելի են եղել մինչ այդ և գնահատման առաքելության ընթացքում, ինչպես նաև երկրում այլ ազգային և միջազգային մարմինների հետ տեղի ունեցած հանդիպումների ընթացքում: Գնահատման արդյունքում պատրաստված հաշվետվությունը գտնվում է նախագծային փուլում: Հայաստանն առաջին երկիրն է Արևելյան Եվրոպայի, Կով-

կասի և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում, որն անցել է միգրացիայի վիճակագրության հատվածի գնահատում:

ՀՀ ԱՎԾ-ն վիճակագրության մասով մասնակցել է ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով համագործակցության ենթակոմիտեի աշխատանքներին:

2014թ.-ին ՀՀ ԱՎԾ-ն իրականացրել է Եվրոստատի «Վիճակագրական տվյալների հավաքագրում Եվրոպական հարևանության քաղաքականության Արևելյան (ENP-EAST) երկրներից» խորագրով նախագիծը:

ՀՀ ԱՎԾ-ն վիճակագրության մասով մասնակցել է Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության հետ կապված աշխատանքներին:

2014թ. հունիսի 30-ին ստորագրվել է Մտադրության նամակ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և ՀՀ ԱՎԾ միջև մի կողմից և Եվրոպական բնապահպանական գործակալության՝ մյուս կողմից, որի նպատակն է սահմանել Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ձևավորման համագործակցության շրջանակները:

Իրականացվել են բանակցություններ և քննարկումներ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ ԵՄ ԹՎինինգ գործիքի ներքո «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎինինգի միջոցով» խորագրով ծրագրի շրջանակում իրականացված գործողությունների և ձեռքբերված արդյունքների վերաբերյալ՝ Դանիայի վիճակագրական ծառայության գլխավոր տնօրեն՝ պարոն Յ. Էլմեսկովի հետ, հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ Եվրոստատի ներկայացուցիչ՝ պարոն Պ. Եվերայերսի հետ, Ավստրիայի ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցության բաժնի պետ՝ տիկին Բ. Դրանդիցի և ԱՄՆ-ի Գյուդատնտեսության դեպարտամենտի փորձագետ՝ պարոն Մ. Ստայների հետ, մասնավորապես, գյուդատնտեսական համատարած հաշվառման բնագավառում, Ռուսաստանի Դաշնության պետական վիճակագրության դաշնային ծառայության ղեկավար պարոն Ա. Սուրինովի հետ՝ գյուդատնտեսական համատարած հաշվառման բնագավառում երկկողմանի ծրագիր իրականացնելու վերաբերյալ, ներգրավելով «Պրոգնոզ» ընկերությանը, ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի տնօրեն՝ տիկին Մ.Գույերերոյի հետ՝ ուսումնական դասընթացների կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ, մասնավորապես, 2015թ.-ին Երևանում, ինչպես նաև Մակեդոնիայի վիճակագրական ծառայության տնօրեն՝ տիկին Բ. Նովկովսկայի հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների վերաբերյալ «Փարիզ 21»-ի շրջանակում, Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնի տնօրեն՝ պարոն Ադել Ազարի և տնօրենների խորհրդի անդամների հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների, հեռանկարների և ուղղությունների, վիճակագրական տարբեր ոլորտներին ուղղված ապագա քայլերի և գործողությունների վերաբերյալ, Եվրոստատի ներկայացուցիչ տիկին Կլաուդիա Յունկերի հետ՝ նոր ԹՎինինգ Ծրագրի առաջարկի վերաբերյալ, ինչպես նաև Դանիայի և Ավստրիայի վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչների հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) ներկայացուցիչ՝ պարոն Գաբրիել Գամեսի և Իտալիայի ազգային վիճակա-



գրական ինստիտուտի ներկայացուցիչ՝ տիկին Նադյա Միգնոլլիի հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) ներկայացուցիչ՝ տիկին Անդրեա Շելլերի հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, մասնավորապես, «Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի (GSBPM)» ներդրման ուղղությամբ, Ղազախստանում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ՝ պարոն Ռաիմբեկ Միսեմալինի հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UNESCAP) ներկայացուցիչ՝ տիկին Ռիկկե Հանսենի հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) ներկայացուցիչ՝ պարոն Գաբրիել Գամեսի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) ներկայացուցիչ՝ պարոն Կուրտ Վասսի և Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ներկայացուցիչ՝ տիկին Կլաուդիա Յունկերի հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, մասնավորապես, ՄԱԿ-ի զարգացման հաշվի (UNDA) 9-րդ տրանշի «Ազգային կարողությունների հզորացում UNECE-ի առավել խոցելի երկրներում վիճակագրության կայուն զարգացման համար» նախագծի շրջանակում:

Միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում 2014թ. հոկտեմբերի 11-31-ը ներառյալ ՀՀ-ում ԳՀՀ (փորձնականը՝ 2013թ.-ին) անցկացմանն օժանդակելու նպատակով ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվել են Հայաստանի Հանրապետության հնարավոր դոնորների ներգրավման, ծրագրային առաջարկների, համապատասխան գրությունների, նամակների, նյութերի մշակման և թարգմանչական աշխատանքներ:

ՀՀ ԱՎԾ-ի միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացվել է նաև վիճակագրական տեղեկատվության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ (թվով 1 110): Ստացվել են բազմաթիվ տարեգրքեր, տեղեկագրեր, տեղեկատուներ, մեթոդաբանական ձեռնարկներ, հարցաթերթեր և այլ վիճակագրական նյութեր:

2014թ.-ի ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից լույս է ընծայվել 2 մամուլի հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 170 հարցման:

2014թ.-ի ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում տեղի են ունեցել 91 պաշտոնական հանդիպում, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Տեղեկատվության միջպետական փոխանակման շրջանակում 2014թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից լրացվել և նախատեսված պարբերականությամբ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել է 156 վիճակագրական հարցաթերթ, որոնցից՝ 14-ը՝ ամսական, 27-ը՝ եռամսյակային և 115-ը՝ տարեկան պարբերականությամբ: Ընդ որում, բոլոր հարցաթերթերը նախատեսված են եղել ներկայացնել էլեկտրոնային տարբերակով: